№ 136 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 25 1903 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 25 № 136

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ»
Նամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 258.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 258.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

յայտնում է, որ այսօր, չորեքշաբթի, յունիսի 25-ին, վերահսկող կօմիտէտի նախագահ

**ԻՎԱՆ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎԻՉ ԹԱՅԻՐԵԱՆԻ**

մահվան եօթներորդ օրը, Ընկերութեան բնակարանում տեղի կունենայ հոգեհանգիստ հանգուցեալի յիշատակին։ Հոգեհանգիստը կը սկսվի ժամի 12-ին։ 1—1

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անյարմարութիւնների պատճառով.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Աշագին լէգէօն. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սերբիական անցքերը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Աղջիկ սեռի վաճառքը Եւրոպայում.

## ԱՆՅԱՐՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ

Մեր Կովկասը մինչև այժմ չէ գրաւում մեծ թւով այցելուներ դէպի ինքը։ Զը նայելով այն հանգամանքին, որ կովկասեան լեռները իրանց տարածութեամբ և բազմատեսակութեամբ ամենանշանաւորներիցն են երկրագնդի վրա, չը նայելով երկրի արգիւնքների, պատմական հնութիւնների և ազգագրական նիւթերի հարստութեան, մենք իւրաքանչիւր տարի հիւր ենք ունենում միայն մի քանի գիտնականների, որոնք գալիս են մեր երկիրը ուսումնասիրութիւնների համար։ Մեզ մօտ եկողները գնում են մեզնից՝ հիացած մեր երկրի մէջ պարունակվող հետաքրքրական բազմատեսակ նիւթերից և միաբերան յայտնում են, որ տասնեակ տարիներ են հարկաւոր բոլոր այդ նիւթերը ուսումնասիրելու համար։ Սակայն մի անգամ հիւր եկողը շատ սակաւ դէպքերում է կրկնում իր այցելութիւնը մեր երկրին։

Ի՞նչ է պատճառը։

Գլխաւոր պատճառներից մէկն այն է, որ մեր երկրում չեն ստեղծված դիւրութիւններ և յարմարութիւններ ճանապարհորդների համար։ Մեծ նեղութիւններ և զրկանքներ են յաճախ պահանջվում ամենափոքր ճանապարհորդութիւններ անելու համար։ Չը կան կազմված ուղեցոյցներ, բացակայ են հիմնարկութիւններ և անձինք, որոնք իրանց ցուցումներով օգնութիւն հասցնէին ճանապարհորդներին։

Այդ անյարմարութիւնների պատճառով ոչ միայն օտարները չեն այցելում մեր երկիրը, այլ և մենք՝ կովկասցիներս՝ բաւականաչափ չենք կարողանում ծանօթանալ մեր երկրի հետ և դժուարանում ենք ճանապարհորդութիւններ կատարել, եթէ կարիքը և անհրաժեշտութիւնը հրամայողաբար չեն պահանջում այդ անելու։ Իսկ երբ անհրաժեշտութիւնն է դրդում մարդկանց երթևեկութիւններ անելու, այն ժամանակ դժուար է դէպի ճանապարհորդութիւնները դրաւել այնպիսի անձերի, որոնք դիտաւորութիւն ունեն ծանօթանալ երկրի այս կամ այն մասի հետ, բայց ամենևին ցանկութիւն չունեն ենթարկվել փորձութիւնների և զրկանքների։

Փոխանակ դիւրութիւններ տալու՝ մեր գաւառական մարդիկ ընդհակառակը դըժուարացնում են այցելուների դրութիւնը։ Ձիու, սայլի, կառքի ձեռք բերելը դառնում է մի հերոսութիւն, մթերքներ ճարելը դառնում է մի դժուար լուծելի խնդիր։ Ամեն բան յանկարծ թանգանում է և ներկայանում իբրև մի առեղծուած։ Եւ հասկանալի է, եթէ մի անգամ ճանապարհորդողը այլ ևս ցանկութիւն չէ ունենում կրկնել իր այցելութիւնը։

Այդ անյարմարութիւնների վերացնելու և մի շարք դիւրութիւններ ստեղծելու համար արժէ հոգ տանել։ Մենք պէտք է հեշտացնենք այն բոլոր միջոցները, որոնք նպաստում են երկրի հետ ծանօթութեան և յարաբերութիւնների զարգացման։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՇԱԳԻՆ ԼԷԳԻՕՆ

Դա մի բազմութիւն է, որն իր ահագին թւով աչքի է ընկնում մեր վաճառականական ասպարէզում։ Դա գործակատարների դասակարգն է, որի մասին հարկաւոր ենք համարում մի քանի խօսք ասել։

Գործակատարների դասակարգը մի այնպիսի տարր է ներկայացնում, որը իր անպարկեշտ վարմունքով շատ շատերին անհամակրելի է դարձել։ Եւ իրաւ. անմիտ սրախօսութիւններ, լպիրշ բամբասանք՝ գործակատարների բնորոշ յատկանիշներն են։ Մտաւորապէս անանկացած, բարոյապէս կասկածելի և ֆիզիկապէս տկար,—ահա ձեզ մեր գործակատարի իսկական տիպը։ Գործակատարը քծնող է, շողոքորթող և կեղծաւոր։

Զուրկ լինելով սեփական լուրջ դաստիարակութիւնից, մեր գործակատարը ամենևին չէ հետաքրքրվում ընդհանուր հասարակական խնդիրներով։

Բայց ինչո՞ւ է այդպէս փչացած այդ դասակարգը... Նայենք այժմ մեդալի միւս երեսին։

Վաղ առաւօտվանից մինչև ուշ գիշերը գործակատարը բանտարկված է խանութում։ Օրվայ այդ երկար ժամերին նա պարտաւոր է ամենայն աչալրջութեամբ հսկել, նայել խանութի բոլոր գործերին և կարգաւորել նրանց։ Ապա մեծ պատրաստակամութեամբ սպասում է նա յաճախորդին. յայտնվում է և յաճախորդը։ Սկսվում է կոմէդիան։ Մեր գործակատարը լարախաղացի թռիչքներով դիմաւորում է յաճախորդին և բարեկամային ժպիտով ներս է հրաւիրում նրան։ Այստեղ նա հազար ու մի երդումներով ծախում է ապրանքը։ Եւ որքան այդ գործողութիւնը լաւ է անցնում, այնքան հաճելի է լինում խաղէքինին, թէպէտ այդ հաճոյքը խոր լռութեամբ է պահում նա։ Իսկ եթէ այդ ընդունակութիւնը ցոյց չը տուեց գործակատարը, այլ ևս խաղէքինի աչքին չէ գալիս նա, և լուտանքների, հայհոյանքների ու յանդիմանութիւնների տարափը թափվում է խեղճ գործակատարի գլխին։ Գործակատարը կատարեալ հլու հպատակ է խաղէքինի։ Նա պէտք է հետևէ իր տիրոջ ամեն մի ակնարկին։ Ուրիշների առաջ, մի չնչին բանի առիթով, խաղէքինը սովորական բան է համարում անարգել, անպատուել իր գործակատարին։ Երբ մի որ և է տարաձայնութիւն է ծագում խաղէքինի և գործակատարի մէջ, այդ դէպքում միշտ գործակատարն է մեղաւոր, միշտ այդ անիրաւ «պրիկաշչիկն» է մեղաւոր։

Գործակատարը պէտք է միշտ անպայման խաղէքինի զուտ շահերի մասին մտածէ, որովհետև խաղէքինի կարծիքով, նա միմիայն դրա համար է ստեղծվել։ Ուրիշ ոչ մի շահ նա աչքի առաջ չը պէտք է ունենայ։ Եւ այդ պատճառով էլ գործակատարը պարտաւոր է օրեկան 14—18 ժամ արթուն պահապան լինել, այս և այն կողմ ընկնել, որպէս զի իր տիրոջ գործերը լաւ պայմանների մէջ լինեն։ Բայց տակաւին խաղէքինը միշտ դժգոհ է, միշտ անբաւական։ Ուստի գործակատարը լարում է իր ոյժի ամբողջ կարողութիւնը, որպէս զի խաղէքինի աչքին լաւ երևայ։ Մի կարևոր գործի համար, եթէ գործակատարը գնացած լինի... մի որ և է տեղ, կամ դուրսը խօսելիս լինի իր մի ծանօթի հետ, այդ դէպքում նա արժանանում է բուրժուական խրոխտ հայեացքի և նկատողութեան։ Եթէ գործակատարը փորձէ յիշեցնել իր խաղէքինին, որ ինքը մեքենայ չէ և ոչ էլ անբան անասուն,—ո՛հ, այդ ժամանակ աղայական սպառնալիքը հանդէս է գալիս իր ամբողջ թափով, որից յետոյ թագաւորում է ստրկական լռութիւն։

Թէպէտ կան գործակատարներ, որոնք միշտ բարձր են դասում մարդկային պատւի արժանաւորութիւնները, որոնք տոգորված են համամարդկային գաղափարներով, ինչպէս կան նաև խաղէքիններ, որոնք վայելուչ և մարդավայել կերպով են վերաբերվում դէպի իրանց ծառայողները, բայց, տարաբաղդաբար, թէ առաջինների և թէ երկրորդների թիւը շատ սակաւ է։

Մի խանութի գործակատարները ճնշում են իրար. իսկ այդտեղ առաջնակարգ տեղ է բռնում աւագ-գործակատարը, որը որոշ արտօնութիւն է վայելում խանութում։ Եւ երբ դրանք իրար միշտ են ուտում, այդ բանը շատ դուր է գալիս իրանց խաղէքինին, որովհետև... որովհետև յայտնի պատճառներ կան։ Ուստի ինտրիգաները այդտեղ անպակաս են։ Այդ գործակատարները մոռանում են նոյն իսկ իրանց «աղ ու հացը», որ ամեն օր միասին են ճաշում։

Իւրաքանչիւր խաղէքին, երբ խրատում է իր

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԱՂՋԻԿ ՍԵՌԻ ՎԱՃԱՌՔԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

Քաղաքակիրթ աշխարհի առաջադիմութեան լուսաւոր գծերով յափշտակված մարդու համար կարծես անհնարին է լինում հաշտվել այն մտքի հետ, որ եւրոպական հասարակական կեանքի դրական փարթամ կուլտուրայի հետ, զգալի արագութեամբ առաջ են գնում և բացասական, սև կողմեր, որոնց գոյութիւնն անգամ հեռաւոր արևելքում կասկածելի է, իբրև վերին աստիճանի քստմնելի իրականութիւն։ Այդ տեսակէտից խիստ բնորոշ են պրօֆէսօր Ա. Ռ. Ռօլլէսի խօսքերը, որ ասում է. «Զարմանալի առաւելութիւնների կողքին—և գուցէ հէնց նրանց շնորհիւ—այս հարիւրամեակի (այսինքն 19-րդ դարի) մէջ կան նոյնպէս ապշեցնող պակասութիւններ, մասամբ մտաւոր, իսկ մասամբ բարոյական և հասարակական բնաւորութիւն ունեցող» 1)։ Եւ բոլորովին տարօրինակ չի լինի նոյն իսկ ամենալաւատես մտածողի համար, եթէ նա լռելեայն ընդունէ այն բացայայտ իրողութիւնը, որ թէև «մենք ապրում ենք մի քաղաքակրթված դարաշրջանում, գնահատում ենք մեր ժամանակի մարդասիրական վեհ ձգտումները, մեր կեանքը ղեկավարող իրաւունքի գիտակցական որոշումները թելադրում են անհատական կատարեալ ազատութիւն և այլն, մենք, սակայն, ամենևին չենք պատկերացնում մեզ, որ ստրկութիւնն ու մարդկային մսի վաճառքը վերացրված են լոկ ձևական տեսակէտից»... 2), ասում է դօկտօր Լիւդվիկ Վեստը իր նորերս լոյս տեսած խիստ ուշագրաւ գրքոյկի մէջ։

«Մարդկային մսի վաճառք»—այս հրէշային թեման պիտի զբաղեցնէ մեզ, ընթերցող, իր անլուր ու տխուր պարագաներով, որի համար գլխաւորապէս նիւթ է տալիս մեզ դօկտօր Վեստի առաջ յիշած աղբիւրը («Աղջիկների ներկայ առևտուրը»)։ Շնորհիւ այն ջանքերի, որ այդ գրքոյկի հեղինակը ցոյց է տուել «աղջիկների վաճառման» գործը և հասարակական տների ծաւալումը Եւրոպայի նշանաւոր երկրներում և Ամերիկայում անձամբ ուսումնասիրելու, աջողվել է նրան մի բազմակողմ և խիստ հետաքրքրական ուսումնասիրութիւն տալ ընթերցողին։ Դօկտօր Վեստը շատ բան պատմում է ականատեսի լեզուով և «առևտրի» ցանցաձև ուղղութիւնների գոյութիւնը հաստատում գրաւոր դօկումենտներով։

Գոյութեան կռւի սոսկալի ճիրաններին ենթակայ կանացի սեռի այն մասը, որ իր օրվայ պարէնը հայթհայթելու համար բռնադատված է պոռնկութեամբ—աշխարհի ամենահնագոյն արհեստով—զբաղվելու դժբաղդութիւն ունենալ, աւելի կամազուրկ, ստրկահոգի ու գերի դարձած արարած է, քան գուցէ հնադարեան ստրուկը, նոր դարի առևտրի առարկայ նեգրը։ Սօցիալական կեանքի անծայր դժբաղդութեան ենթակայ այդ զոհերը,—իբրև մի արձանացած բողոք դարիս գեղագոյն քաղաքակրթութեան հասցէին,—իրանց հլու հնազանդութեամբ, խաղալիք, կատարեալ «փալաս» են այն ձեռքերում, որոնք շպրտում, ձգում են նրանց գիւղից քաղաք, քաղաքից քաղաք, երկրից երկիր, երկրագնդի մի ծայրից միւսը՝ ովկիանոսների և մայր ցամաքների հսկայական տարածութիւններ կտրելով։ Այժմ օր ցերեկով կատարվող ակնյայտնի իրողութիւն է, որ «մարդկային մսի վաճառքը»—այն էլ «թարմ մսի», որպէս «թարմ ապրանք»—իր բոլոր զազիր պարագաներով, ահագին ծաւալ է ստացել եւրոպական զանազան երկիրներում և դրանով միջնորդապէս թէ անմիջապէս զբաղվողների մի դասակարգ գրաւել։ Այժմ ստրուկ նեգրների փոխարէն, միջազգային վաճառանոցն են արտահանվում Եւրոպայի գեղեցիկ սեռից անբաղդ զոհեր ամենատրագիկական վիճակի մէջ։ Առաջընթաց կուլտուրան, ինչպէս տեսնում էք, ընթերցող, երևոյթների հակառակ մետամորֆօզներ շատ է սիրում։

Ինչպէս սովորական իրերի առևտուրը, այնպէս էլ աղջիկ սեռի առևտուրը, կամ աւելի բնորոշ արտայայտած՝ «մարդկային մսի վաճառքը», ունի շրջանառութեան երկու գլխաւոր ակտ—արտահանութիւն (export) և ներմուծում (import), հետևապէս և երկրների երկու տարբեր կարգեր՝ արտադրող և սպառող։ Մարդկային «թարմ ապրանք» կամ մատաղահաս աղջիկներ սպառելու սիրահարներ համարվում են սովորաբար եւրոպական և ամերիկական քաղաքակիրթ երկիրները, որոնց լճացած մայրաքաղաքների—ինչպէս են՝ Լօնդօն, Պարիզ, Բերլին, Համբուրգ, Վիեննա, Ս.-Պետերբուրգ, Կ. Պօլիս, Նիւ-Եօրկ, Չիկագօ, Ս.-Ֆրանցիսկօ, Րիօ դը Ժանէյրօ, Բուենոս-Այրես և այլն—հազարաւոր նկուղներում գեղեցիկ սեռի ապերջանիկ դասը, որպէս ճակատագրական, նախատական զոհեր, բռնաբարութեան և անզուսպ կրքերի խաղալիք են դարձած։ Այդ քաղաքներից իւրաքանչիւրը, ժամանակակից «Բաբելօնը» դառնալու համար, բաց չէ թողնում մրցութեան ոչ մի միջոց։ Իսկ ինչ վերաբերում է աղջիկներ արտադրող միջավայրին, այդ տեսակէտից ստատիստիկան տալիս է այնպիսի ուշադրութեան արժանի ցուցմունքներ, որոնք պարզ վկայում են, թէ ինչպէս մեծ քաղաքներում հասարակական տների պռոնիկների մեծագոյն մասը ծագում է ուղղակի գիւղերից և գաւառական քաղաքներից, թէև միւս կող-

---

1) Տես յաւելուած „Մուրճի“, „Հրաշալի դար“, առաջաբան. 1903 թ., № 1.

2) Dr. Ludwig E. West, „Der moderne mädchenhandel“.

ծառայողին, նա միշտ իրան է օրինակ բերում, իր անձի վրա է մատնացոյց անում։ Բայց աչկարայ յայտնի է, որ մեր վաճառականը տըմարդի է, քծնող է, մի խօսքով նա յայտնի է իր գայթակղեցուցիչ և ապականված կեանքով։ Եւ գործակատարը հետևում է իր խազէինի օրինակին։ Այս էլ չը մոռանանք ասել, որ մեր գործակատարների մեծամասնութիւնը պատանեկան, նոյն իսկ երեխայական հասակում է մտել ծառայութեան մէջ։ Արդ գործակատարները լոկ միայն կարդալ, գրել գիտեն, մինչդեռ ներկայումս անհրաժեշտ է, որ հասարակութեան ամեն մի անդամ որոշ կրթութեան և զարգացման տէր լինի։

Կատարեալ տաժանակիր աշխատանք է ներկայացնում գործակատարի ծառայութիւնը ամառ ժամանակ։ Մի ընդհանուր թուլութեան է հասցնում գործակատարին չոքը, ճնշող օդը, միատեսակ տաղտկալի կեանքը և օրեկան աշխատանքի երկար ժամերը։ Զանձրացած իր կեանքից, նա երանի է տալիս, որ շուտով մթնի, շուտով անցնեն օրերը, շաբաթները և այլն։

Գուցէ հետաքրքրվող լինի, թէ նիւթապէս ինչպէս է վարձատրվում գործակատարը. դրա մասին կարող ենք ասել, որ գործակատարների մեծամասնութիւնը պարտքերի մէջ է խըրված։ Եւ ահա նրա տենչանքն ու իղձերն է շուտով խազէին դառնալ, ուստի միջոցների մէջ խտրութիւն չը կայ։ Եւ թէպէտ մի քանիսին աջողվում է քոսոտ, ողորմելի խանութպան դառնալ, բայց և այնպէս դրանց կեանքը ոչնչով չէ զանազանվում բուն գործակատարի կեանքից, որովհետև կապիտալիզմը հետզհետէ իր ահարկու և զօրեղ հարուածներով օդ է թողնում, հիմնայատակ է անում զանազան մանր-մունր առևտրական տներն ու խանութները։ Փոխանակ մտածելու, միահամուռ ուժով բարելաւել ընդհանուր գործակատարների վիճակը, նրանք իրանց նեղ և եսասիրական հայեացքներով վնասում են իրանց ընդհանուր գործին։

Եւ ահա այդպիսի պայմաններում, այդպիսի միջավայրում, ինչ տեսակ մարդիկ պէտք է արտադրվեն, եթէ ոչ վերոյիշեալ տիպի մարդիկ։

Արր. Գրիգորեանց

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յունիսի 24-ին

Թոյլ տուէք խնդրեմ «Մշակի» միջոցով խորին շնորհակալութիւնս յայտնելու բժիշկ պ. Եփրեմ Աղամալեանցին, որը մեծ ուրախութեամբ յանձն առաւ առանձին հոգատարութիւն ունենալով ինձ վրա՝ բոլորովին առողջացնել ինձ առանց որ և է վճարի, դեղերի համար վճարելիք ծախսերից ազատելով համդերձ։

Հիւանդ հայ ուսուցիչ

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Кавказъ» լրագրին հեռագրում են Պետերբուրգից. «Կովկասեան քաղաքացիական մասի կառավարչապետ իշխան Գոլիցին ճանապարհ կընկնի դէպի Թիֆլիս առաջիկայ յուլիս ամսի 1-ին»։

Նոյն լրագրին հեռագրում են Համամլի կայարանից, Աբասթումանից, Գունիբից, Թելաւից և Փասանաուրից, որ յունիսի 21-ին և 22-ին տեղացած յորդ անձրևները մեծ վնասներ են պատճառել երկաթուղիական գծերին և շօսատային խճուղիներին։ Շատ տեղերում ճանապարհները մեծ տարածութեամբ քանդվել և անանցանելի են դարձել։ Միջոցներ են ձեռք առնված վնասված տեղերն ուղղելու և անցորդների երթևեկութիւնը վերականգնելու։

Յունիսի 23-ին, Անանովի քարվանսարայում գտնվող Աւետիսեանի խանութից գողացված է 5,000 րուբլի փող և խաղարկութեան մի քանի տոմսեր։ Չարագործները մտել էին Աւետիսեանի խանութը, որ գտնվում է քարվանսարայի երկրորդ յարկում, այն սենեակից, ուր ապրում էին իրանք և որ գտնվում է երրորդ յարկում։ Չարագործները դեռ ևս չեն գտնված։

Թիֆլիսի նահանգի ազգաբնակութեան առողջական գրութեան վերաբերեալ տեղեկագրից, որ բժշկական վարչութիւնը ներկայացրել է նահանգական ատեանի վիճակագրական բաժանմունքին, երևում է, որ անցեալ 1902 թւականին Թիֆլիսի նահանգում կային 183 բժիշկներ, որոնցից 150-ը քաղաքներում և 33-ը—գիւղերում, ֆէլդշէրներ—92, մանկաբարձուհիներ—35, դեղատներ—22՝ քաղաքներում և 20՝ գիւղերում։ Բոլոր դեղատներից տրված են դեղեր 382,476 դեղատոմսերով, որոնց համար վճար ստացված է ընդամենը 289,358 րուբլի։

«Рус. Вѣд.» լրագրին հաղորդում են Պետերբուրգից. «Դրամատիկական և երաժշտական գրողների միութեան վարչութիւնը իր վերջին նիստի մէջ, որ տեղի ունեցաւ յունիսի 17-ին, լսելով միութեան իւրիս-կօնսուլտ Բիխովսկու զեկուցումը և հիմնվելով թէ այժմս գոյութիւն ունեցող օրէնքների և թէ ռուսաց թատրոնական ընկերութեան և միութեան կանօնադրութիւնների վրա, որոշեց ընդունել, որ օտարերկրեայ դրամատիկական և երաժշտական գրողները, որոնք անդամ են ռուսաց թատրոնական ընկերութեան, իրաւունք ունեն լինելու և միութեան անդամ։ Միութեան օտարերկրեայ անդամների թէ ինքնուրոյն և թէ թարգմանական գրուածքները պէտք է պաշտպանութիւն գտնեն միութեան կողմից. նոյնպիսի պաշտպանութիւն պէտք է գտնեն և օտարերկրեայ գրական—երաժշտական արտադրութիւնները—օպերաները, օրատորիաները և այլ նման երկերը, բայց այդ պաշտպանութեան եղանակները պարզելու համար պէտք է սպասել դատաստանական գործերից բղխող ցուցումներին։ Զուտ երաժշտական գրուածքները, առանց բնագրի, չեն կարող պաշտպանութեան առարկայ լինել։ Վարչութեան այս եզրակացութիւնները որոշվեց հաղորդել ֆրանսիական և երաժշտական գրողների ընկերութեան կոմիտէտին և հարցնել, թէ ինչ իրաւունքներ կը կարողանան վայելել ռուս գրողները, եթէ ցանկանան անդամ գրվել ֆրանսիական ընկերութեան»։

**ՂԶԼԱՐԻՑ** մեզ գրում են. «Լրացաւ Րաֆֆիի մահվան տասնեհինգամեակը. տօնվեց նրա տարեդարձը մի քանի տեղեր։ Բայց մեր Ղըզլարն էլ ամսիս 15-ին Րաֆֆիի յիշատակին նուիրած երեկոյթով կամեցաւ մասն ունենալ այդ ընդհանուր յարգանքից դէպի պատկառելի վիպասանը։ Երեկոյթի նախաձեռնողն էր ուսանող Ռ. Աստուածատուրեանը, որը տեղիս սիրողների հետ կարողացաւ աջողեցնել այդ երեկոյթը և գլուխ Րաֆֆիի յիշատակին նուիրված լինելով՝ անմահացրեց ժողովրդի աչքին «Սամուէլի», «Դաւիթ-Բէկի» հեղինակին։ Ծրագիրը բաւական ճոխ էր կազմված։ Եկեղեցական երգեցիկ խումբը երգեց «Ահա ծագեց», պ. Բ. Մեղնիկեան երգեց solo «Ձայն տուր ով ծովակ», իսկ պ. Տ. Աւագեանի Թիֆլիսի բարբառով ու հագուստով կարդացած «Կռակ» ոտանաւորը գեղեցիկ տպաւորութիւն թողեց։ «Ջալալէդդինից» առնված տեսարանները «Սահրատ և հայրը», «Սահրատը ազատում է հայ գերիներին» հիանալի ազդեցութիւն թողին ժողովրդի վրա, ուր պ. Ա. Ղարիբեանը Սահրատի դերում աչքի ընկաւ։ Երեկոյթը վերջացաւ ապօթէօզով։ Անմահ վիպասանը նստած սեղանի առաջ գրում է, չուրջը կանգնած են իր հերոսները—Խենթ, Ջալալէդդին, Սահրատ, Դաւիթ-Բէկ, Փառանձեմ, Սամուէլ, Ասլան, Կարօ և Քաւոր Պետրոս և այդ ժամանակ նրա պատկառելի գլուխը զարդարվում է պսակով։ Ի սրտէ շնորհակալութիւն ենք յայտնում սիրողներին»։

**ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ** մեզ գրում են. «Ներկայումս մեզանում յայտնվել է դիֆտերիտ և բաւական թւով զոհեր է տանում։ Ինչպէս և միշտ, քաղաքի բնակչութիւնը անտարբեր է վերաբերվում այդ հիւանդութեան, խուսափելով դէպքերի մասին բժշկին յայտնելուց։ Շատերը նոյն իսկ ծածկում են, թէ իրանց տանը հիւանդ կայ, վախենալով դեղից ու բժշկից, որովհետև հաւատացած են, որ հասարակ բկացաւ է և կանցնի մի քանի պառաւական դեղերով և թէ բժիշկը այնպիսի դեղ կը տայ, որ հիւանդը կը մեռնի։ Այս պատճառով շատ դըժուար է լինում իմանալ, թէ որտեղ հիւանդ կայ։ Բժիշկ Զաքարեանց ջանք չէ խնայում արմատախիլ անելու հիւանդութիւնը և իւրաքանչիւր տան վրա, ուր դիֆտերիտի բոյն դնելը նրան յայտնի է, պահապաններ է կարգում, որպէս զի հիւանդի ազգականները ու բարեկամները չը գնան այցելելու նրան ու վարակվեն։ Տարաբաղդաբար, Զաքարեանցը իբրև գաւառի բժիշկ, յաճախ բացակայում է Նոր-Բայազէտից, ուստի հիւանդութիւնը իր հունձը հնձում է։ Այստեղ ահա զգացվում է սեփական բժշկի ու դեղատան կարիքը։ Ինչպէս լսում ենք, այդ հիւանդութիւնը ձմեռս Նոր-Բայազէտից 30 վերստ հեռաւորութեան վրա գտնվող Ջօլախաչ գիւղում մեծ վնասներ է հասցրել, ապա այդտեղից անցել է մեզ մօտ»։

**ԽԼԻ-ՂԱՐԱՔԻԼԻՍԱ** գիւղից մեզ գրում ս. «Տաշանղշլաղ գիւղում (Ալէքսանդրօպօլի գաւառ) այս օրերս պատահեց հետևեալ եղեռնագործութիւնը, որը գիւղական ժողովրդին գցել է սարսափի մէջ։ Յունիսի 15-ին անյայտ չարագործները, երեկոյեան ժամը 9-ին, մըտնում են տեղացի հարուստ Գէորգ Մարջանեանցի տունը և սպանում իրան Գէորգին և իր որդեգրած աղջկան ու տանում բոլոր ունեցած հարստութիւնը։ Զարմանքը նրանումն է, որ հանգուցեալի կինը ազատվել է։ Երբ նրան հարցնում ես, թէ դու ինչպէս ազատվեցիր. նա պատասխանում է, թէ ես կալը գընացի նայելու, թէ խոմ խոտը ուտացնող չը կայ, մինչև եկայ արդէն սպանել էին։ Հանգուցեալի մարմինը 17 տեղից կտրտել էին խանչալով և ճղել փորը. նոյն կերպով սպանել էին և աղջկան, որ 18 տարեկան էր։ Մինչև այժմ եղեռնագործները չեն գտնված, բայց, ինչպէս երևում է, գործը շուտով կը պարզվի, որովհետև կառավարութիւնը շատ լաւ միջոցներ է ձեռք առել պարզելու անյայտ եղեռնագործութիւնը... Կնոջ սնդուկից, որին չէին դիպել չարագործները, դուրս եկաւ 700 րուբլի փող»։

**ԲԱԼԱԽԱՆԻԻՑ** մեզ գրում են. «Յունիսի 17-ի առաւօտեան, ժամը 6-ին, Րոմանի գիւղի մի տան բակից լսվում են կանանց լացի ձայներ, որով, ինչպէս երևում է, հարևաններին օգնութեան են կանչում։ Գիւղացիք, մտնելով բակը, իմանում են հետևեալը։ Մի պարսիկ առաւօտեան վաղ բաց է անում իր բակում գտնվող ցորենի համար պատրաստած հորի բերանը, որի խորութիւնն է լինում մօտաւորապէս 6 արշին, որպէս զի մաքրէ և յետոյ լցնէ ցորենով։ Այդ միջոցին մի փոքրիկ կատու է ընկնում այդ հորի մէջ։ Անմիտ պարսիկը, առանց երկար մտածելու, բռնում է իր 14 տարեկան աղջկայ թևից և իջեցնում մի և նոյն հորի մէջ, կատուին հանելու դիտաւորութեամբ։ Բայց որովհետև ամբողջ մի տարի այդ հորի բերանը փակ է լինում, ուստի այնտեղի խոնաւութիւնը և անցեալ տարվայ ցորենի հոտը շնչասպառ անելով խեղճ աղջկան՝ գետին է տապալում նրան։ Հայրը տեսնելով այդ՝ ցատկում է հորի մէջ, բայց փոխանակ աղջկան ազատելու, ինքն էլ է ենթարկվում նոյն դրութեան։ Շուտով մի մարդու մէջքից թոկ են կապում ու ցած թողնում. նա էլ տեսնելով, որ շնչառութիւնը նուազում է, զանազան շարժումներով իմաց է տալիս, որ դուրս քաշեն իրան. այդ վերջինին կարողանում են սառը ջրի օգնութեամբ ուշքի բերել։ Վերջապէս հարևաններից մէկին աջողվում է մի կերպ դուրս բերել երկուսին էլ կիսամեռ։ Վերոյիշեալ դէպքը այնքան էլ ցաւալի չէ, ինչքան այն, որ տգէտ գիւղացին մինչև օրս էլ դեռ չէ կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ սրա նման դէպքերում բժշկական օգնութիւնը անհրաժեշտ է և այդ պատճառով էլ

---

մից անուրանալի է այն երևոյթը, որ գիւղերում ազգաբնակութեան բարոյական մակարդակը անհամեմատ բարձր է, պակասում են պաշտօնական պոռնկանոցները *)։

Երևոյթների այդ պարզ հակադրութիւնը բացատրվում է այն տնտեսական տագնապալից վիճակով, որ ունի գիւղական մասսան։ Որքան մեծ է տնտեսական կարիքը, հետևապէս և սուր բնաւորութիւն ստացած կեանքի խնդիրը, և, որպէս երրորդ հանգամանք՝ իր ժողովրդի տըգիտութիւնը, այնքան էլ, բնականաբար, հեշտ ու ձեռնտու է աղջիկների արտահանութիւնը այդ տեսակ միջավայրերից, այնքան էլ «մարդկային մսի առևտուրը» հոգացող ագենտները «որսորդութեան» մեծ ցանցեր կարող են լարել ժողովրդի խուլ անկիւններում։ Հէնց այդ է պատճառը, որ այդ կարգի աղջիկներ արտադրողները համարվում են մեծ մասամբ Եւրոպայի արևելեան երկիրները, ասել է՝ աւելի աղքատ ու համեմատաբար խաւար կողմերը. օրինակ՝ Պրուսիայի, Ռուսաստանի և Աւստրիայի լեհական բաժինները, Բալկանեան երկիրները, Ունգարիան, Աւստրիան և ապա Գերմանիան, մանաւանդ արևելեան մասը, և Շվէյցարիան։ Պոռնիկ կամ պոռնկացնելու դիտաւորութեամբ գնած աղջիկների տեղափոխութեան գլխաւոր նաւահանգիստներ համարվում են, ամենից առաջ Օդեսսա, Գենուա, Բորդօ և անգլիական մի քանի ծովաքաղաքներ, որտեղից այդ անդասատական զոհերին դէպի հարաւային Ամերիկա են քշում։ Դէպի արևելք տեղափոխելու գլխաւոր նաւահանգիստը համարվում է Կ. Պօլիսը։ Գերմանիայում խիստ յայտնի է այդ տեսակէտից Համբուրգը, իբրև «սպիտակ ստրկուհիների» վաճառանոց, որտեղից ահագին քանակութեամբ գերմանուհիներ և չեխուհիներն են տեղափոխվում Ամերիկայի Միացեալ-Նահանգները, Բրազիլիան և Արգենտինան։ Նիւ-Եօրկի, Չիկագօի, Ս.-Լուի և այլ մեծ քաղաքների հասարակական տների անառակ կանանց մեծագոյն մասը գերմանուհիներ են, որոնք «աւելի քան ուրիշները, գրգռում են յաճախորդների ընչաքաղց ճաշակը»։ [1] Առհասարակ գերմանուհիներ, այդ «պատուաւոր կոչման» մէջ, շատ են տարածված։ Չը կայ մի երկիր, որտեղից այնքան «սպիտակ ստրկուհիներ» արտահանվեն դէպի աշխարհի բոլոր հեռաւոր ծայրերը,—Եապօնիա, Սիբիր, Հնդկաստան, Սինգապուր, Ս.-Ֆրանցիսկօ և անգամ Թիւրքիայի հարեմը,—ինչպէս արտահանվում են Գերմանիայից և Աւստրիայից» [2]։

Աղջիկների վաճառման գործը այն աստիճան տարածվել և ամուր հիմքեր է ընդունել, որ ծաւալ է տուել միթխարի ձեռնարկութիւններին։ Նիւ-Եօրքում գտնվում են երկու մեծ ընկերութիւններ՝ նախագահ, փոխ-նախագահ, քարտուղար, վերին ու ստորին տեսչութիւն և այլն բաժանմունքներով։ Նրանցից մէկը ունի 45 մշտական անդամներ, իսկ միւսը և ամենաազդեցիկը՝ 75 անդամներ, էլ չենք ասում հեռաւոր անկիւններում ցիր ու ցան բազմաթիւ գործակալների մասին, որոնք կարգվում են տեղական հանգամանքների համեմատ «որսեր» անելու։ Նրանց առևտրի լեզուն, որով իրար լուրեր են հասկացնում անդամներն ու գործակալները և յայտարարութիւններ տալիս լրագիրներում, մի պայմանական լեզու է, որի փոխաբերական միտքը սովորական մարդու համար բոլորովին անհասկանալի է։ Օրինակ, ինչ կարող է հասկանալ սովորական ընթերցողը այս խօսքերից. «5 տակառ ունգարական գինին հասան արդէն Վարնա» (այդ նշանակում է՝ 5 ունգարական շատ գեղեցիկ աղջիկներ), կամ «3 քըսակ կարտօֆէլ ուղարկել «Lloyd Minerva» շոգենաւով» (այսինքն 3 միջին կարգի գեղեցիկ աղջիկներ) և այլն։ Այս պայմանական լեզվով ազատ յայտարարութիւններ և հեռագիրներ տալը սովորական երևոյթ է, առանց հսկող աչքերի ուշադրութիւնը գրաւելու։

Աղջիկների առևտրի ամենամեծ և կենտրօնական վաճառանոցը, թէ արտահանութեան և թէ ներմուծութեան կողմից, որ ուղղակի համաշխարհային բնաւորութիւն է ստացել, համարվում է Լօնդօնը։ Հպարտ Անգլիայի մօտ 5 միլիօն բնակիչներից բաղկացած մայրաքաղաքը միայն ապրանքի, վաճառատների և բորսայի տեսակէտից չէ, որ առաջինն է համարվում ամբողջ աշխարհում, այլ և «մարդկային մսի վաճառման» գործում անհաւասար տեղ է բռնում։ Կուտակվում, լճանում են այնտեղ մատաղ կանանց և աղջիկների ահագին լէգիօններ, արտահանած Անգլիայի ծայրերից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Աւստրիայից, Բելգիայից, Հօլլանդիայից, Ռուսաստանից, Իտալիայից, Ամերիկայից և այլն, որոնք նորից քշվում են, ի հարկէ հակառակ ուղղութեամբ, դէպի աշխարհի բոլոր ծայրերը։ Սակայն Լօնդօնը այդպիսիների համար միայն վաճառանոց չէ, նա մի հնոց է նաև, որ սառն և անփորձ մարմիններին շիկացնում, կազմ ու ձև է տալիս և ապա անփառունակ ասպարէզը նետում։ Շատ յաճախ բերվում են այնտեղ հազար ու մի խաբուսիկ միջոցներով բոլորովին անմեղ, կոյս աղջիկներ, մատաղ հասակում, միանգամայն անփորձ, լեզուին անտեղեակ։ Եւ որպէս զի տեղափոխութիւնը արագ ընթանայ և կողմնակի անյարմարութիւնների չը հանդիպի, այդ բոլորին վարժեցնելու, իրանց ապագայ «կոչման» ընտելացնելու, աւելի պարզ խօսենք՝ բռնաբարել տալու (Defloration) ոճրագործ հեղինակը, որպէս մի միջազգային բիւրօ, կազմակերպված է Լօնդօնում։

(Կը շարունակվի)

---

*) Pastor E. Wagnor, „Die Sittlichkeit auf dem Lande".

[1] Dr. Ludvlg E. West, „Der moderne Mädchenhandel", եր. 9.

[2] August Bebel, „Die Frau und der Sozialismus", 34 հրատ., եր. 191.

մինչև կէս օր այդ խեղճերի համար ոչ մի բժիշկ չը դիմեցին, այլ աշխատում էին տնային զանազան միջոցներով ուշքի բերել նրանց, որը, ի հարկէ, չաջողվեց և միայն այդ դէպքից 6 ժամ յետոյ ստիպված եղան, մի քանի հասկացող մարդկանց խորհրդով, մի բժիշկ հրաւիրել, որը գալով՝ աղջկան մեռած գտաւ, իսկ հօրը ուշքի բերելով ուղարկեց Բալախանիի հիւանդանոցը, որտեղ հիւանդը այժմս իրան բաւական առողջ է զգում։ Թշուառ աղջիկը նշանված էր մի Թուրք երիտասարդի հետ և պիտի սեպտեմբերին պսակվէին։»

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՍԵՐԲԻԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԸ

—

«Temps» լրագրի Բէլգրադի թղթակցի խօսքով, Պետր Թագաւորը այս օրերս կը կատարէ ճանապարհորդութիւն Սերբիայում միայնակ, առանց մինիստրների։ Նա կայցելէ Նիշ, Կրագուէվից և Տօպօլին քաղաքները։ Այդ վերջին քաղաքը Կարագէօրգիեվիչների համար նոյնն է, ինչ որ էր Տակօվօն Օբրէնօվիչների համար։

—

«Berliner Tageblatt» լրագիրն ասում է, որ դիպլօմատիական բանակցութիւններն աւարտված են և որ բոլոր պետութիւնները, բացի Անգլիայից, ընդունեցին սերբիական նոր Թագաւորին։ Ֆրանսիական դեսպանը վերադարձաւ Բէլգրադ։

—

Վիէննայի «Zeit» լրագրի թղթակցի հետ խօսակցութեան ժամանակ, Թիւրքական մի դիպլօմատ ասաց, որ Թիւրքիան իր յարաբերութիւնների մէջ դէպի Սերբիան կը հետևէ Գերմանիայի օրինակին։ Սերբիայի օգուտն է, որ նա քննութիւն և դատ նշանակէ մարդասպանների վրա, ապա ներումն շնորհէ և միջոցներ տայ նրան արտասահմանում ապրելու։

—

Արմատական «Odjek» լրագիրը ասում է, որ Սերբիայում դեռ մնացած կան կասկածելի, ինտրիգներ վարող և վտանգաւոր անձինք, որոնց անհրաժեշտ է անվնաս դարձնել, մանաւանդ որ այդ գայլերը շրջում են գառան մորթով։

—

Վիէննայի «Allgemeine Correspondenz» հեռագրական գործակալութիւնը հաղորդում է մի հետաքրքիր տեղեկութիւն, որ գործակալութիւնը ստացել է արժանահաւատ աղբիւրից, որ իբր թէ Անգլիան իր ձեռքում ունի պարզ և անհերքելի ապացոյցներ, որ իշխան Պետր Կարագէօրգիեվիչ ոչ միայն տեղեկութիւն ունէր դաւադրութեան մասին Ալէքսանդր Թագաւորի դէմ, այլ և եռանդուն կերպով մասնակցում էր այդ դաւադրութեան իր ազգական Նէնադօվիչի միջոցով։ Անգլիան իբր թէ ուղարկել է այդ դօկումէնտների պատճէնները պետութիւններին։

—

Բէլգրադից լրագիրներին հեռագրում են, որ Բէլգրադի նոր հրամանատար փոխգնդապետ Պօպօվիչ շատ դժուար կացութեան մէջ է գտնվում այն պատճառով, որ Պետր Թագաւորը վճռել է ամէն առաւօտ զբօսանք կատարել Բէլգրադում ծպտեալ կերպով, հասարակ քաղաքացու զգեստով, առանց սվիտայի և ոստիկանութեան։ Շատ տարիներ շարունակ, դեռ ևս իշխան Կարագէօրգիեվիչ եղած ժամանակ, այժմեան Թագաւորը սովորութիւն ունէր առաւօտեան զբօսանքներ կատարել ոտքով Ժընևի փողոցներում։ Այդ զբօսանքները Թագաւորը չէ կամենում փոխել այժմ ևս։

—

Պետր Թագաւորը հրամայեց, որ արտասահմանեան բոլոր լրագիրները ստացվեն Սերբիայում առանց ցէնզուրական ջնջումների։

—

Վիէննայի լրագիրների Բէլգրադից ստացված տեղեկութիւնների համեմատ, գործերի դրութիւնը Սերբիայում բաւական անորոշ է։ Պետր Թագաւորի Բէլգրադ ժամանելու նախընթաց օրը դաւադրութեան մասնակցողները արտակարգ խորհրդակցութիւն ունէին և վճռեցին բողոքել մայիսի 29-ի արիւնհեղութեան մասին քննութիւն կատարելու որ և է փորձի դէմ։ Եթէ, այնուամենայնիւ, քննութիւն նշանակվի, այն ժամանակ նրանք հրաւէր կը կարդան իրանց ընկեր զինուորականներին՝ չը հնազանդվել Թագաւորին։

—

Վիէննայի քաղաքական շրջաններում կարծում են, որ մի քանի ամսից յետոյ Պետր Թագաւորը ստիպված կը լինի հրաժարվել գահից ի նպաստ իր աւագ որդու։

—

Կ. Պօլսում հրատարակվող «Levant Herald» լրագիրը նոր մեղադրանքներ է թափում բէլգրադեան դաւադիրների վրա։ Նա պատմում է, որ Ալէքսանդր Թագաւորի սպանութիւնից երկու օր առաջ, Թիւրքաց ոստիկանութիւնը սկսեց հետևել շորերը փոխած սերբիական երկու օֆիցէրներին, որոնք աշխատում էին մտնել այն տունը, ուր ապրում է Միլան Խրիստիչ, Միլան Թագաւորի և Արտէմիզա Խրիստիչի ապօրէն զաւակը։ Տեսնելով, որ նրանց հետևում են, երկու օֆիցէրները շտապեցին ուղևորվել Սերբիա։ Թիւրքաց ոստիկանութիւնը համոզված է, որ նրանք ուղարկված էին Միլանին սպանելու համար։

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ունգարական նոր մինիստր—նախագահ կոմս Կուէն Խէդէրվարի ծնվել է 1849 թւին, Սիլեզիայի մի փոքր քաղաքում, Գրէֆէնբէրգում։ Նրա հայրը—կոմս Կուէն Բէլասսի, ծագումով գերմանացի, խոշոր կալուածատէր էր Սլաւօնիայում։ Իր անուանը նա միացրեց Խէդէրվարի ազգանունը այն ժամանակ, երբ իր մի ազգականից յետոյ ժառանգեց Խէդէրվարի հրաշալի կալուածքը և դարձաւ այսպիսով Խօրվատիայի և Ունգարիայի խոշոր մագնատներից մէկը։ Կոմս Կուէն Խէդէրվարի դեռ ևս բաւական երիտասարդ, 26 տարեկան հասակում, ընտրվեց ունգարական սէյմի պատգամաւոր։ Նա մտաւ ազատամիտ կուսակցութեան անդամների շարքի մէջ, որից հեռացաւ միայն այն ժամանակ, երբ այդ կուսակցութիւնը պառակտվեց և բաժանվեց երկու մասի 1877—78 թւականներին։ Բայց և այնպէս կոմսը չանցաւ ընդդիմադիր կուսակցութեան կողմը։ 1882 թւին Կօլօման Տիսսա, այն ժամանակվայ ունգարական մինիստր-նախագահը, նշանակեց Խէդէրվարիին Րաաբ շրջանի կառավարիչ, իսկ 1889 թւին ստացաւ Խօրվատիայի բանի նշանաւոր պաշտօնը։ Կոմս Կուէն Խէդէրվարի ամուսնացած է Կօլօման Տիսսայի մօտիկ ազգականուհու, կոմսուհի Տէլէկի հետ։

—«Neue Freie Presse» լրագրի ասելով, այն բոլոր սերբ օֆիցէրներին, որոնք սովորում են աւստրօ-ունգարական զօրքի մէջ, առաջարկված է դադարեցնել իրանց պարապմունքները և խզել իրանց բոլոր յարաբերութիւնները աւստրօ-ունգարական զօրքի հետ։ Բէլգրադի պալատում տեղի ունեցած դրամայից յետոյ աւստրօ-ունգարական օֆիցէրները սկսեցին այն աստիճանի վատ վերաբերվել դէպի իրանց սերբ ընկերները, որ վերջինների դրութիւնը դարձաւ անտանելի։ Սերբիական օֆիցէրների հարցը յանձնվեց վճռելու աւստրօ-ունգարական զօրքի գլխաւոր վարչութեանը, և զինուորական մինիստրութիւնը որոշեց, որ աւստրօ-ունգարական օֆիցէրները չեն կարող շարունակել շփումն ունենալ այնպիսի օֆիցէրների հետ, որոնք համախոհ են արքայասպանների և անպաշտպան կնոջ սպանողների հետ։

—Գերմանիայի շատ կէտերում լուրջ անկարգութիւններ տեղի ունեցան ընտրութիւնների ժամանակ ռէյխստագում, երբ այն թեկնածուները չէին ընտրված լինում, որոնք ցանկալի էին ազգաբնակութեան ստորին խաւերին։ Դօրտմունդում, Գէլզէնկիրխէնում, Խագէնում և Շպանդաուում ամբոխը արիւնահեղ ընդհարումներ ունեցաւ ոստիկանութեան հետ, որը ստիպված էր դիմել սրերի և հրացանների օգնութեան։ Ամբոխը նոյնպէս հրացաններ էր արձակում ոստիկանութեան վրա, քարեր և գարեջրի շիշեր էր գցում։ Երկու կողմերից ևս շատերը վիրաւորվեցին։ Ոստիկանութիւնը բազմաթիւ ձերբակալութիւններ կատարեց։

# «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

## ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

### 23 յունիսի

**ԻՐԿՈՒՏՍԿ։** Կատարվեց սիբիրեան ռէլսային ճանապարհի Հիմնադիր Կայսր Ալէքսանդր III-ի արձանի հիմնարկութիւնը։ Հիմքի մէջ տախտակը և առաջին քարը դրեց շինարարական մասնաժողովի նախագահ Պետական Խորհրդի անդամ Պանտէլէևը։ Արձանը կառուցանելու համար հաւաքված է 170,000 րուբլի։ Մտադրութիւն կայ աշխատանքներն աւարտել 1904 թւին։

**ՄՈՍԿՎԱ։** Համառուսական դէրբի 33,473 րուբլի գումարը վերցրեց Լազարէվի «Լօրդ» մատակ ձին։

**ԱԹԷՆՔ։** Պատգամաւորների ժողովի նիստը աղմկալի բնաւորութիւն ընդունեց։ Դիմադրական կուսակցութիւնը ջերմ կերպով յարձակվում էր նոր կաբինէտի քաղաքականութեան վրա։ Նիստը փակվեց մեծ յուզման մէջ։

**ԲԷԼԳՐԱԴ։** Կառավարութիւնը վճռեց ժողովրդական տօն դարձնել ս. Պետրոսի և Պօղոսի օրը։

**ՎԻԷՆՆԱ։** Ճգնաժամը վերջնականապէս կարգադրված է։ Ընդունվում է միայն Բէգէկի հրաժարականը։

**ՊԱՐԻԶ։** Յունիսի 22-ին փակվեց սենատի և պատգամաւորների ժողովի նստաշրջանը։

**ՀՌՈՄ։** Հրատարակված է բիւլլէտէն պապի առողջութեան մասին։ Նա խորհրդակցեց Մացցօնիի հետ, որը հաստատեց Լապպօնիի դրած դիագնօզը։ Հիւանդութիւնը—թոքերի մէջ կատարված փոփոխութիւնն է ծերութեան պատճառով։ Ընդհանուր դրութիւնը լուրջ է, բայց երկիւղալի չէ։ Հաւաքված են պապական զօրքերը։ Հրամայված է մաղթանքներ կատարել եկեղեցիներում։ Կարդինալները խորհուրդ կազմեցին։ Մօտ կէս օրին պապի առողջական դրութիւնը մի փոքր լաւացաւ. հիւանդութիւնը տրամադրութիւն ունի տարածվելու։

**ՊՐԱԳԱ։** Հանդէսները ի յիշատակ Հուսի սկսվեցին ներկայացումով Եան Ժիժկայի ժողովրդական թատրօնում։ Ռուս հիւրերին տրված էր օթեակ։ Ներկայացումից յետոյ կայացաւ երեկոյթ։ Նախագահը ողջունեց հիւրերին մի ճառով, հրաւիրելով դէպի փոխադարձ մերձեցումն։ Երգում էին երգեցիկ ընկերութիւնների միացեալ խմբերը։ Նուագախումբը կառավարում էր Գօրէլօվ։ Ահագին է եկւորների թիւը։ Պրագան զարդարված է ազգային դրօշակներով և Հուսի դատի և մահվան պատկերների նկարներով։ Հասարակութիւնը լցված է փողոցներում, պատշգամբների և կտուրների վրա։ Կորտէժը բացվում է բազէներով. բազէները, համքարութիւնները, հրացանաձիգները և ընկերութեան պատգամաւորութիւնները դրօշակներով անցնում են փողոցներով, ոգևորութիւն առաջացնելով։ Մասնակցողների թիւը մինչև 30,000 է։ Խտրադան բռնած ունեն ռէյխստագի և սէյմի պատգամաւորները, քաղաքագլուխները, համալսարանի պրօֆէսօրները և պատուիրակները։ Հասարակութիւնը տրիբունների վրա է։ Պատգամաւոր Գրէգր խօսեց հանդիսաւոր ճառ, որի մէջ պարզեց Հուսի, ժողովրդական գաղափարներ կրողի, պատմական նշանակութիւնը։ Մուրճով առաջինը քաղաքագլուխը խփեց. «Յանուն ճշմարտութեան, որ պաշտպանում էր Հուսը, և արքայական Պրագայի։»

**ԵՕԿՕՀԱՄԱ։** Լուր է պտտում, որ մինիստր-նախագահ Կատցուրա հրաժարական տուեց։ Պատճառը—առաջիկայ տարվայ բիւդժէտի ֆինանսական նախագծերի իրականացման դժուարութիւնն է։

**ՍՕՖԻԱ։** Սօֆիայում գտնվող դիմադրական պատգամաւորները ստորագրեցին մի բողոք, որի մէջ յայտարարում են, որ պաշտօնեաներին վերաբերեալ օրէնքի յօդուածների վերացումը հակառակ է սահմանադրութեան։ Բողոքը կուղարկվի գաւառներում ապրող դիմադրական բոլոր պատգամաւորներին՝ ստորագրելու համար։ Կուսակցութեան բոլոր պարագլուխներից բաղկացած պատուիրակութեանը յանձնարարված է ներկայացնել իշխանին բողոքին վերաբերեալ դօկումէնտը։

**ՀՌՈՄ։** Երեկոյեան հրատարակվեց հետևեալ բիւլլէտէնը. «Թուլութիւնը մի փոքր աւելացաւ։ Կրծքի դրութիւնը անփոփոխ է։ Զարկերակը թուլացաւ։ Տաքութիւնը բնականից ցածր է։ Գիտակցութիւնը կատարելապէս պարզ է։—Պապը, շրջապատված կարդինալներով և բարձրաստիճան պաշտօնեաներով, ընդունեց Ս. Հաղորդութիւնը։ Վատիկանում կարծում են, որ պապը բաւական ոյժեր ունի գիշերը անցկացնելու համար։ Պապի մահվանից առաջ հաղորդութիւնը շատ սրտաշարժ էր։ Սուրբ Հաղորդութիւնը տանող պրօցէսիային մասնակցում էին 16 կարդինալներ։ Երբ վերջինները համբուրում էին պապի ձեռքը, նա ասաց. «Գնում եմ դէպի յաւիտենականութիւն»։

**ՍՕՖԻԱ։** Մի քանի մեծ պետութիւններ պատասխանեցին բօլգարական կառավարութեան վերջին յայտագրին, թէ Բօլգարիան պարտաւոր է հանգիստ մնալ, որովհետև Թիւրքիան ամենևին յարձակողական դիտաւորութիւններ չունի, այդ պատճառով պատերազմական պատրաստութիւններ տեսնելու և զօրքերը զէնքի կանչելու հիմքեր չը կան։ Այդ պատասխանը հանգստացնող տպաւորութիւն գործեց հասարակութեան վրա։

**ԲԷԼԳՐԱԴ։** Զարիկօվ յանձնեց Պետր Թագաւորին նոր հաւատարմաթուղթ չորեքշաբթի, հանդիսաւոր ունկնդրութեան ժամանակ։

**ՄՈՍԿՎԱ։** Մոսկվայի սլաւօնական ընկերութիւնը հանդիսաւոր կերպով տօնեց Եան Հուսի յիշատակը։ Ընկերութեան երգեցիկ խումբը կատարեց չէխական և սերբիական երգեր ու հուսիտների օրհներգը։ Ընկերութեան օրկէստրը կատարեց ազգային ռուսական և չէխական հիմներ։ Ընկերութեան նախագահ Չէրէպ-Սպիրիդօվիչ ճառ արտասանեց. բացատրելով Հուսի քարոզների և գրիւնվալդեան յաղթութեան միջև եղած կապը։ Սլաւօնները պարտաւոր են պատրաստվել Գրիւնվալդի կրկնութեանը։ Մինչև որ գոյութիւն ունի տէվտօնեան օրդէնը, սլաւօնները չը պէտք է մէկ ձեռքից բաց թողնեն աւետարանը, իսկ միւսից—սուրը և պէտք է յիշեն Հուսի պատգամը համասլաւօնական հաշտութեան մասին։ Ներկայ էին բօլգարներ, բօսնեացիներ և հերցէգօվինցիներ, չէրնօգօրցիներ և չէխեր։

**ՊԱՐԻԶ։** Լուբէ յունիսի 23-ին ուղևորվեց Անգլիա։

**ՀՌՈՄ։** «Voce della Verita» լրագիրը հաղորդում է, որ գիշերը պապի առողջական դրութեան մէջ ոչինչ փոփոխութիւն տեղի չունեցաւ։ Նրա ամուր կազմուածքը շատ դիմացկուն է երևում։ «Messagero» լրագրի խօսքերով, ընդհակառակն, բորբոքումը տարածվեց թոքերի ձախ մասի վրա։—Բիւլլէտէն. «Պապը համարեա անքուն անցկացրեց գիշերը, բայց աւելի պակաս անհանգիստ, քան նախընթաց գիշերը։ Թոքի դրութիւնը չը փոխվեց։ Հիւանդի դրութիւնը չը բարւոքվեց, բայց և չը վատացաւ»։

**ՆԻՒ-ԵՕՐԿ։** Նախագահ Րուզվէլտ մի զօրեղ ճառ արտասանեց, որի մէջ ասեց, թէ Ամէրիկան լաւ յարաբերութիւնների մէջ է գտնվում բոլոր ազգերի հետ. Րուզվէլտ կարծում է, որ վերջինները տածում են դէպի նրան բարի դիտաւորութիւններ, որոնք պաշտպանվում են նրա առձեռն առաջնակարգ նաւատորմով, այդ պատճառով Ամէրիկային հարկաւոր է լաւ նաւատորմ, որպէս խաղաղութեան ամենաէժան երաշխաւորութիւն։

Յունիսի 21-ին բացվեց ամէրիկական հեռագրական նոր կաբէլի գործունէութիւնը Խաղաղ ովկիանոսի միջով, որ կապում է Միացեալ-Նահանգները Ֆիլիպպինեան կղզիների հետ։

**ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։** Թագաւոր Կայսրը այցելեց գութանների ժողովածուն, որ հանդէս էր դրել «Пахарь» ակցիօնէրական ընկերութիւնը, թըւով 23 հատ զանազան տիպի գութաններ Ալէքսանդրօվսկի պալատի մօտ։

### 24 յունիսի

**ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։** Ներքին գործերի մինիստրը որոշեց դադարեցնել «Владимирская Газета» լրագրի հրատարակութիւնը ութ ամսով։

**ՊՐԱԳԱ։** Կիրակի երեկոյեան Պրագայի բնակիչները սարքեցին ջահերթացք հրապարակի վրա. երգեցիկ ընկերութիւնների ահագին խումբը երգեց խօրալ։ Քաղաքը շքեղ զարդարված է։ Երկուշաբթի ռատուշան ընդունում էր հիւրերին։ Քաղաքագլուխը ողջունեց մի ճառով, ուրախութիւն յայտնելով, որ տեսնում է հիւրերին, մանաւանդ ռուսներին։ Ստանօ, ռուսական ժողովարանի և սլաւօնական ընկերութեան անդամը, շնորհակալութիւն յայտնեց Պրագային հիւրասէր եղբայրական ընդունելութեան համար և բարեմաղթեց չէխերին ազատութիւնը նուաճելու համար արգելքները յաղթել։ Սլաւօնական ընկերութեան պատուիրակ Բօբրօվ—Կօրժէնէվսկի ողջունեց քաղաքային վարչութիւնը Ռուսաստանի և Մօսկվայի անունից։ Մնացած ճառերը նուիրված էին հանդէսների նշանակութեանը, սլաւօնական շահերի համերաշխութեանը և չէխական ժողովրդի ստեղծագործական ոյժերին։

**ԿՐԷՅՑՆԱԽ։** Չէրնօգօրիական իշխանը իր ընտանիքով ժամանեց այստեղ։

**Կ. ՊՕԼԻՍ։** Բօլգարական կառավարութեան շրջաբերական յայտագիրը արձագանք չը գտաւ կաբինէտների կողմից։ Բ. Դուռը նոյնպէս ուզում է շրջաբերական յայտագիր ուղարկել՝ հերքելով այն յայտարարութիւնները, որոնք պարունակվում էին բօլգարական յայտագրի մէջ։—Սուտ է այն տեղեկութիւնը, որ Կումանօվօում կենտրօնացած են Օմէր-Րուշտի-փաշայի 80 բատալիօններ։

**ԼԻԲԱՎԱ։** Լիբավա ժամանեց Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլօվիչ և տեսաւ Ալէքսանդր III-ի նաւահանգիստը. այստեղից «Ագիա» կրէյսերով Մեծ Իշխանը ուղևորվեց Սակէնգաուզէն՝ Պավլօվսկի նաւահանգիստը տեսնելու, իսկ այնտեղից—Վինդավա և Րիգա։

**ԴՈՒՎՐ։** Լուբէ ափ իջաւ և ուղևորվեց Լօնդօն։

**ՀՌՈՄ։** Օրվայ ընթացքում պապը իր սեփական ցանկութեամբ վերջին օծումն ընդունեց. 6 ժամին նկատելի էր ոյժերի անկումն։—Բիւլլէտէն. «Երեկոյեան 8 ժամին ոյժերի ընդհանուր անկման նշաններ են երևում։ Շնչառութիւնը աւելի կարճ է։ Զարկերակը թոյլ է. գիտակցութիւնը չէ խանգարված»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

## ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշւով, փակագծում Թիֆլիսի հաշւով)

Արագ գնացք Թիֆլիսից—Բաթում ամեն օր դուրս է գալիս առաւօտեան 9 ժ. 39 ր. (10 ժ. 37 ր.) հասնում է Բաթում երեկոյեան 8 ժ. 3 ր. (9 ժ.)։

Արագ գնացք Բաթումից—Թիֆլիս ամեն օր դուրս է գալիս երեկոյեան 10 ժ. 24 ր. (11 ժ. 22 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 8 ժ. 44 ր. (9 ժ. 42 ր.)։

Պօստատար գնացք Բաքուից դուրս է գալիս երեկոյեան 9 ժ. 18 ր. (10 ժ. 16 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 4 ժ. 25 ր. (5 ժ. 23 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 5 ժ. 20 ր. (6 ժ. 18 ր.), հասնում է Բաթում առաւօտեան 6 ժ. 5 ր. (7 ժամ 3 րոպէին)։

Մարդատար գնացքը Բաքուից դուրս է գալիս ցերեկվայ 1 ժ. 3 ր. (2 ժ. 1 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 6 ժ. 5 ր. (7 ժ. 3 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից առաւօտեան 6 ժ. 51 ր. (7 ժ. 49 ր.), հասնում է Բաթում երեկոյեան 6 ժ. 58 ր. (7 ժ. 56 ր.)։

Պօստատար գնացքը Բաթումից դուրս է գալիս գիշերվայ 9 ժ. 23 ր. (10 ժ. 21 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկվայ 10 ժ. 51 ր. (11 ժ. 49 ր.), հասնում է Բաքու առաւօտեան 5 ժ. 8 ր. (6 ժ. 6 ր.)։

Մարդատար գնացք Բաթումից դուրս է գալիս առաւօտեան 9 ժ. 39 ր. (10 ժ. 37 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյեան 10 ժ. 3 ր. (11 ժ. 1 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 10 ժ. 34 ր. (11 ժ. 32 ր.), հասնում է Բաքու ցերեկվայ 3 ժ. 2 ր. (4 ժ.)։

Պօստատար գնացքը դուրս է գալիս Թիֆլիսից դէպի Երևան երեկոյեան 11 ժ. 32 ր. (12 ժ. 30 ր.), հասնում է Երևան 5 ժ. 14 ր. (6 ժ. 12 ր.), հասնում է Կարս 2 ժ. (2 ժ. 58 ր.)։

Պօստատար գնացքը Կարսից դուրս է գալիս ցերեկվայ 3 ժ. 57 ր. (4 ժ. 55 ր.), հասնում է Ալեքսանդրօպօլ երեկոյեան 7 ժ. (7 ժ. 58 ր.), Երևանից դուրս է գալիս 11 ժ. 6 ր. (12 ժ. 4 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 5 ժ. 11 ր. (6 ժ. 9 րոպէին)։

---

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

## Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր բացի կիրակի օրերից։

ԲՈՒԺՕՂՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզական. հիւանդ.

ՉԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։

Հ. Ի. ԲԵՐԲԵՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.

Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երկուշ. չորեք. ուրբաթ։

Ա. Գ. ԿԵՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ։

ԵՐԵԿՕՆԵՐԸ

Ն. Ն. ՌՕՍՏՕՄԻՆՕՎ—5—6 ժ. վիրաբուժ. և մորթու հ. (էլեկտրաբուժ.)։

Լ. Վ. ԲԱՐՑՕԼԴ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժ) ներքին և վեներական հ.

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԵԶԵՐԲԻՆԻՆԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։

Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—8—8½ ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ց. ԱԹՎԱՆԻՑԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

---

## ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ

գրախանութում վաճառվում են

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆՑԻ ՀԵՏԵՒԵԱԼ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

| | |
|---|---|
| 1) Բեօրնսօն՝ կազմեց Ե. Թոփչեան | 10 կ. |
| 2) Մահմէդ՝ » » » | 7 » |
| 3) Մեսրոպ Մաշտոց՝ կազմեց Ե. Թ. | 5 » |
| 4) Սահակ Պարթև՝ » » » | 5 » |
| 5) Հաուպտման՝ » » » | 15 » |
| 6) Մեծն Ներսէս » » » | 10 » |

Շուտով լոյս են տեսնելու՝ 1) Ղևոնդ Երէց. 2) Զրադաշտ. 3) Վարդան Մամիկոնեան։

Պատրաստ է տպագրութեան համար՝ 1) Ընտրութիւն կաթողիկոսների՝ Գ. Մեծատուրեանի։ Պատրաստվում են նոր հրատարակութիւններ։

Դիմել՝ Книжный магазинъ „Гуттенбергъ", (Дворцовая) Галустяну. 2—3

---

Ամառվայ ընթացքում

«ՄՈՒՐՃ»

ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

## ԲԱՑ Է

Երեքշաբթի և ուրբաթ օրերը առ. ժ. 11-ից—3, միւս օրերը, բացի կիրակի և տօն օրերից, ժ. 1-ից—3։ 3—10

---

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

## „ՇՔԵՂ"

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱԼԲՈՄԻ

Ա. պրակը

Հայրենի յիշատակների 10 ընտիր ֆօտօտիպ նկարներով (18×24 մեծութեամբ)։

Գինն է 1 ր. 50 կոպ. 10-ից աւելի գնողներին 20% զեղջ։

Դիմել՝ Թիֆլիս, Պուշկինեան Պասաժ

3—10 Ֆօտօտիպ Գնունի—Մարիմ

---

Լոյս տեսաւ

Ե. ԼԱԼԱՅԵԱՆԻ

Ժողովրդական առակներ

Ա.

## ՄՕԼԼԱ ՆԱՍՐ-ԷԴ-ԴԻՆ

Գինն է 25 կոպ.

Բ.

## ՂՈԲՈՍ

Գինն է 5 կ.

Վաճառվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառանոցներում։ 3—3

---

ԵՒՊԱՏՕՐԻԱՅԻ ծխական դպրոցի համար

## ՀԱՐԿԱՒՈՐ Է
## ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

շրջանաւարտ Ներսիսեան դպրոցի, 400 րուբլի ռոճիկ և սենեակ։ Ցանկացողները թող բարեհաճէին դիմել հետևեալ հասցէով։

Евпаторія, ктитору П. Я. Сеферову.

16—25 Պօղոս Սէֆէրեան

---

Լոյս տեսաւ

Ս. ԹԱՌԱՅԵԱՆՑԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾ-ԻԴԷԱԼԻՍՏ

## ՇԻԼԼԷՐ

Կենսագրական - բանաստեղծական աշխատութիւններ, բաղկացած 448 մեծադիր երեսներից, ընտիր թղթի վրա, 91 ցինկոգրաֆ-աւտօտիպ պատկերներով (չը հաշւելով զարդանկարները)։ Գինն է 3 րուբլի, մէկ փառահեղ կազմի մէջ՝ 4 ր., երկու կազմի մէջ՝ 5 ր.։ Ճանապարհածախս 60 կոպ.։ Առաջին հատորը այլ ևս չէ ծախվում։

Մամուլի տակ է նոյն հեղինակի

«ԹԱԳՆՎԱԾ ԿԱՅԾԵՐ»

դրաման

11 լուսանկար-պատկերներով

Բաժանորդագինն է 1 րուբլի։ Թէ գրքերի և և թէ բաժանորդագրութեան համար դիմել հայ գրավաճառներին։ 4—10

---

ՄԻ ԶԳԱՒՈՐ ՀԱՅ ԿԻՆ

խնդրում է հայ բարերարներից

## ՈՐԴԵԳՐԵԼ

իր երկու աղջիկներին, որոնցից մէկը 8 տարեկան է, իսկ միւսը—6։

Հասցէն. Հաւլաբար, Ս. Մինաս եկեղեցու գաւթում։ Հռիփսիմէ Աղամեանց։ 2—3

---

## ՄԻ ՀԱՅ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ

Որ աւարտել է Թիֆլիսի մանկաբարձական դպրոցը և ունեցել է փորձառութիւն զանազան քաղաքներում, ԿԱՄԵՆՈՒՄ Է ՊԱՇՏՕՆ ՈՒՆԵՆԱԼ ԿՈՎԿԱՍԻ ԳԻՒՂԱՔԱՂԱՔՆԵՐԻՑ մէկում, օրինակ Կաղզւան, Ղարա-Քիլիսա, Դիլիջան, Շուլավէր և այլն։ Գիւղական հասարակութիւնները պայմանները թող հաղորդեն հետևեալ հասցէին.

Астрахань, въ редакцію „Астраханскаго Вѣстника" М-те Шогакату.

(Ե. Շ.) 2—5

---

Լոյս տեսաւ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԽԲ.

## ԱՐԴԻ ԼԵԶՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

ՀԱՏՈՐ Ա.

աշխատասիրեց

Հ. ԳԱԲՐԻԷԼ Վ. ՄԷՆԷՎԻՇԵԱՆ

Դիմել՝ «Handes Amsorya», VIENNE (Autriche), VII Mechifharistengasse 4. 3—3

---

## ԵՂԲԱՐՔ ԾՈՎԻԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով պատիւ ունի յայտնելու ի գիտութիւն պարտքատէրերի, որ նրանց պահանջների ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ, 10%-Ի ՉԱՓ, տեղի կունենայ ներկայ յունիսի 26-ից, Վարչութեան Թիֆլիսի գրասենեակում, Բէբութովսկայա փողոց, տուն № 10, ամեն օր, բացի տօն օրերից, առաւօտեան ժամը 10-ից մինչև ցերեկվայ ժամը 1-ը։ 1—1

---

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

(Тифлисъ, Сололаки, Лермонтовская ул., № 9)

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշւապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկաները սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն. 2) Առևտրական Թւաբանութիւն. 3) Հաշւապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային). 4) Թւաբանութիւն համրիչի վրա. 5) Առևտրական Թղթակցութիւն. 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ձրի ուսուցումն ցանկացողներին գրող մեքենայի վրա։ Պարապմունքները կուրսերում լինում են ամեն օր։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդօնովի տանը № 9, Սերգիևսկայա և Լերմօնտովսկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (Հ. Կ.) 1—25

---

## Գանձակի Հայոց Հոգևոր Կառավարութեան ատենի

մէջ նշանակված է աճուրդ այս 1903 թւականի սեպտեմբերի 19-ին և կրկնաճուրդ նոյն ամսի 24-ին վարձով տալու համար Գանձակ քաղաքի երկրորդ մասում գտնվող ս. Յովհաննէս եկեղեցուն պատկանեալ նորակառոյց բաղանիքը երեք տարի ժամանակով։

Ցանկացողները մասնակցելու յիշեալ բաղանիքի աճուրդին, կարող են կարդալ պայմանների ծրագիրը Հոգևոր Կառավարութեան Դիւանատան մէջ ատենական օրերը 9—2 ժամը օրվայ։

Աճրդախօսութիւնը սկսվելու է երկու հազար եօթ հարիւր հինգ րուբլի գումարից։

Անդամ Հոգևոր Կառավարութեան Գանձակայ՝

3—3 Գրիգոր քահանայ Բաբաքէխեանց

---

## Երևանի Թեմական Հոգևոր Դպրոցի համար

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ ԵՐԿՈՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱՒԱՐՏ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Մի լեզուաբան և մի մաթեմատիկոս։

Պայմանների մասին դիմել այս հասցէով Манглисъ, Архимандриту Гарегину. 3—3

---

ԱՄՍԻՍ ՎԵՐՋԻՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ

## „ԲԱՆԲԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ"

Հանդէսի Ա. գիրքը՝ հետևեալ բովանդակութեամբ

**... Ն. Ադոնց։

Վիպական։ Կարմիր ժամուց, Ա. Արփիարեան։—Դատաւոր, Վ. Փափազեան։—Սև հաւը կանչեց, Ռ. Զարդարեան։—Նախադարում, Հ. Բեթգէ։—Լճակին զամբիկը, Գնէլ։—1. Հերմագորի պատմութիւնը։—2. Անսպասելի բաժակ, Հանրի դը Ռենիէ։

Բանաստեղծական։ 1. Մեր նախորդներին, 2. Պանդուխտ եմ, քոյրիկ, Յովհ. Թումանեան։—Հնչեակներ. 1. Հրաժեշտ, 2. Մտածում, 3. Պատրանքներ, 4. Կանձրևէ, տղաս, 5. Այսչափ ետքը, Վ. Թէքէեան։—Վայրկեաններ և վանկեր։ 1. Դալկուհի, 2. Իրիկուն, 3. Հոգիս ի ծով, 4. Գիշեր, 5. Ցուցերգ, Մ. Կիւրճեան։—Հոգեվարքին ջահերը. 1. Աղօթք, 2. Չարչարանքի երազ, 3. Գթութիւն, 4. Ծարաւ, Ա. Եարճանեան։—Մայրենի գիշերին, Ս. Բաբիեան։—Մայր-տանջանքը, Լ. Աթաբէկեան։—1. Տեսիլ, 2. Երեկոյ, 3. Կլէոպատրա, Ա. Սամէն։

Տեսական։ Գրական նշմարներ, Դեկադանս և սիմբոլիզմ, Ն. Ադոնց։—Արևմտեան հայոց արդի գրականութիւնը, **։—Իրաւունք և բարոյականութիւն, Ա. Կուսիկեան։—Հայոց եկեղեցու 1000-ամեակի նախօրակին, Ն. Ա.։—Գրական-պատմական նիւթեր։—Ստեփաննոս Նազարեանցի նամակները։—Մ. Մուրադեանի գրութիւնը Լեոն XIII պապին։

Գեղարուեստական։ Նոր արուեստ... **։—Նկարներ և քանդակներ։—«Աւետում» Գ. Դ. Ռօսսետտի։—1. «Իրիկուան համբոյր» 2. «Մայրական Գորով» 3. «Պ. Վերլէն» Ե. Կարրիէրի։—1. «Պատերազմ», 2. «Սֆինքս», Ֆ. Շտուկի։—«Համբոյր» Օ. Ռոդէնի։—«Մեռածներին» Բարթոլոմէի։—1. «Նկարչութիւն և բանաստեղծութիւն», 2. «Կեանքի Կղզին», Ա. Բէօկլինի։—«Կնոջ պատկեր» Ֆ. Լենբախի։—«Ընթրիք» Լ. Բաքստի։—1. «Յուդա» 2. «Լուսնծագին» Վ. Կոտարբինսկու։—«Հանգստութիւն», Բոգդանով-Բելսկի։ Հայ արուեստաւորներ։—«Ըմբշուհի» Շահինի։—«Ընթերցանութիւն», օր. Ա. Բաբայեանի։—«Վերահաս ամպեր», Մահտեսեանի։ **, Շապանեանի։—«Էտիւդ» Փ. Թեոլեմեզեանի։—«Աշուն» Ալաջալեանի։—«Սպիտակ դղեակ» Վ. Սուրէնեանի։

Հրատարակչից. Խոնարհաբար խնդրում ենք այն պարոններին, որոնք յանձն են առել ցրել մեր անդորրագիրները, շտապեն յայտնել մեզ իրենց աշխատութեան արդիւնքը, եթէ կարելի է մինչև ամսիս վերջը։ Հաւանօրէն ստիպված կը լինենք բարձրացնել բաժանորդագինը։ Ա. Գիրքը առանձին կարժենայ 2 րուբլի 50 կոպէկ։

Խմբագիր՝ Ա. Ադոնց
Հրատարակիչ՝ Ա. Մելիքեան

Հասցէն. Невскій проспектъ, д. 55. 2—3

---



ՓԱՐԻԶԻ ԴԵՂԱԳՈՐԾԻ

## ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ

ԹՈՅԼ ՏՐՎԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Այս կապսուլների մէջ պարունակված զուտ սանտալի էսսենցիան բժիշկները խորհուրդ են տալիս գործածել միզանցքի (զանազան հիւանդութիւնների) դէմ, կապայ-բալզամի և կուբէբայի փոխարէն։ Նա ներգործում է աւելի արագ, չէ յոգնեցնում ստամոքսը, ոչ մի հոտ չէ պատճառում և ոչնչացնում է փսխումն ու կոլիկը։

Կեղծիքներից խուսափելու համար պահանջեցէք, որ իւրաքանչիւր կապսուլի վրա սև տառերով դրոշմված լինի։

Գտնւում է Ռուսաստանի գլխաւոր դեղատներում

(5, 10, 15, 20 և 25) 26—60

Дозволено Цензурою. Тифлисъ, 24 Іюня 1903 г.
Электропечатня Груз. Изд. Т—ва, Б. Ванкская ул.